

Florenz, 1880)։ Հայերէն թարգմանութիւնը միանգամայն ստրկական թարգմանութիւն է։ Թարգմանիչն աշխատել է ամէն կերպ դուրս դնել նոյն արտայայտութիւնն, ինչ որ ասորերէնումն է, առանց նոյն իսկ ուշադրութիւն դարձնելու հայերէն լեզուի օգուտն. այդպիսով թարգմանիչն իւր հնգեւրոպական լեզուին տուել է սեմական գոյն, ինչպէս նկատում է Պրոյշէն։

Հայերէն թարգմանութեան հնութիւնն ու հաւատարմութիւնն են նրա գլխաւոր արժանաւորութիւնները։

Սակայն, ինչպէս երևում է, Պրոյշէն հայերէնին կարեւոր չափով լաւ տեղեակ չէ։ Անճշտութիւններ և սխալներ պակաս չեն նրա թարգմանութեան մէջ. օր. եր. 4 «ի ձեռն գրոց» թարգմանում է—in eigenhändigen Schriften, փոխանակ—durch Schriften. եր. 5 ծան. 1. «անուն անուանի» թարգմանում է—einen Namen des Namens, «անուանի» ընդունելով իբրև սեռական «անուն» բառի.—եր. 10 die Wiederkunft des Nero, փոխանակ des Antichristen—հայր Նեոինն, ընդունելով այս իբրև սեռական Ներոն անունն, որ կլինէր սակայն Ներոնի, ելն։

Արս. Արեղեան.

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Միջազգային Մատենադարան.—Լոնդոնի թագաւորական ընկերութեան նախաձեռնութեամբ մի վերին աստիճանի շահագրգիռ և նշանաւոր գործի հիմք է դրուում—այն է ընական և մատենատիրական գիտութեանց մատենադարանի։ Ամբողջ աշխարհիցայդ առարկաների վերաբերեալ ուսումնական գրականութիւնը պէտք է մանի մատենադարանի մէջ։ 1901 թուից ընկերութիւնն արդէն սկսել է իւր գործունէութիւնը և ներ-



կայումս հրատարակուած է երկու նշանաւոր հատոր: Հրայական այս գործը գլուխ բերելու համար մասնակցում են երկրագնախ համարեա բոլոր քաղաքակիրթ ազգերը ի դէմս իրենց նոյն առարկաների մասնագէտների: Հրատարակուելիք գրքերը պէտք է տպուին լատիներէն, անգլիերէն, գաղղիերէն, գերմաներէն և իտալերէն, բոլորն էլ լատինական տառերով: Այդ լեզուների վերայ վերջերս աւելացաւ նաև ռուսերէնը, որով ռուսաց լեզուն ընդունելութիւն գտաւ միջազգային լեզուների շարքի մէջ:

Թղթի ԵԻՆՈՒՐԻԱՆՆԵՐ.—Ամերիկայում քանի դնում է, այնքան աւելի է տարածուած թղթի գործածութիւնը: Մի գործարան կաթի համար ամուր և աժան շէնք է պատրաստում, որոնք մի անգամ գործածուելուց յետոյ դէն են ձգւում: Մի ուրիշ գործարան էլ մեծ քանակութեամբ հողաթափներ է պատրաստում՝ այնքան աժան, որ հիւրանոցատէրերն անարդել կարող են առաջարկել ամէն մի ճանապարհորդի: Գերմանիայում թղթից առանձին տեսակի մահուդ են պատրաստում: Թղթից նաև տներ են շինում: Վերջերս Նիւ—Եօրկում մի ռուս այս տեսակ տուն է շինել, որ նրա վերայ 80,000 բուլբի է նստել, տունը բովանդակում է 16 սենեակի ճարտարապետի կարծիքով այս թղթէ տունը քարէ տնից աւելի կայուն է, ամուր և լաւ: Նորվեգիայում թղթից ամբողջ եկեղեցի է շինուած, որտեղ հազար մարդ է տեղաւորուում. եկեղեցին ունի նաև զանգակատուն, որտեղ զանգակներ են կախուած ... ի հարկէ ոչ թղթեայ: Այսպիսով թուրթը մեծ ապագայ ունի դեռ:

Էլեկտրական փոսք.—«Արարատի» մէջ յիշել էինք Իտալացի Պիսիչելիի գիւտի մասին, որով փոստային նամակները առանձին կառքերով մի ժամուայ մէջ 300 վերստ արագութեամբ կտեղափոխուեն առանձին էլեքտրական ճանապարհներով: Սակայն գտնողը միայն սրանով չի բաւականացել, այլ փոստային գործի արմատական քարեփոխութեան համար մի ամբողջ մանրամասն ծրագիր է մշակել, որի իրագործումը փոստային յարաբերութիւնների զարգացման պատմութեան մէջ նոր շրջան կկազմէ: Իտալիայի Վիկտոր Էմմանուէլ թագաւորը ծանօթանալով այս ծրագրին, այնքան հաւանել է, որ խոստացել է Պիսիչելին, հէնց որ հնարաւոր լինի, արքունի հաշուով Հռոմի և Նէապոլսի միջև



նոր ձևի փոփոխյին գիծ անցկացնել:

Իտալացի ինժեների ծրագրի համաձայն իւրաքանչիւր տէ-  
քութեան փոփոխյին շրջանում երեք տեսակ դժեր պէտք է շի-  
նուին: Մէկ գիծը պէտք է միացնէ ամենախոշոր քաղաքները.  
այս սրանք առանձին դժերով կապուած են աւելի փոքր քա-  
ղաքներէ, իսկ վերջիններս միանում են դիւղերի, աւանների  
հետ: Առաջին կարգի քաղաքներն անմիջապէս հաղորդակցու-  
թիւն կարող են ունենալ իրար և երկրորդ կարգի տեղերի հետ,  
իսկ երրորդ կարգի վայրերը իրար հետ կապուած են երկրորդ  
կարգի քաղաքներում եղած կայարանների միջոցով: Նամակներն  
ու լրագիրները հաւաքուած են և տէրերին բաժանուած առանց  
մարդկային ձեռքերի զիպչելու, ավտոմատիկ կերպով: Կառքերը  
իրար յետևից սլանում են առանձին սիւների մօտով, որոնցից  
կախուած են մետաղաթելերը, ավտոմատիկ կերպով կանգնում  
են որոշուած կայարանների մօտ. կայարան մտնելիս իրանք բաց  
են անում և վրակում լծակները, որոնք նրանց արագութիւնը  
գանգադեցնում են և ի վերջոյ բոլորովին կանգնեցնում:

Կառքերի տեղափոխութեան համար անհրաժեշտ էլեք-  
տրական ոյժը մատակարարում է լարուած հոսանքը, որի սաստ-  
կութիւնն առանձին եղանակով կարելի է սլակասեցնել: Ամէն մի  
գիծ ներկայացնում է օգի մէջ կախուած երկու մետաղաթելեր,  
որոնց վրայով սլանում են կառքերը. մետաղաթելերը ամրացրած  
են երկաթեայ սիւների վերայ, որոնցից իւրաքանչիւր տասներոր-  
դը ունի փոստարկղ նամակների համար. սիւնի ծայրին կապուած  
է մետաղաթելը, որ տանում է դէպի գլխաւոր փոստատուն:  
Այս գիծը միմիայն արկղիկներից նամակներ հաւաքելու համար է:  
Գլխաւորին հինգ րոպէ գլխաւոր փոստատնից մետաղաթելի  
վրայով ուղարկում է մետաղեայ պայուսակ, որ ավտոմատիկ  
կերպով կանգնում է պոստարկղ ունեցող սիւների մօտ. փոստ-  
արկղները ավտոմատիկ կերպով դուրս են ձգում իրանց միջինա-  
մակները պայուսակի մէջ և նորից նրան շարժում հաղորդում:  
Անցնելով ամբողջ գիծը, պայուսակը բոլոր նամակները հաւաքած  
վերադառնում է գլխաւոր փոստատուն, որտեղ նամակները  
գատաւորւում են: Մինչև անգամ կնիքը ավտոմատիկ կերպով է  
խփուած և նշանակուած է ոչ թէ միայն ամսաթիւը, այլ և ժա-  
մըն ու ուղարկելու րոպէն: Ինչպէս և փոստարկղի համարը: Իսկ  
նամակներ տէրերին յանձնելու պարտականութիւնը մնում է  
ցրիչների վերայ, որոնք հեծանիւներով բաժանում են նամակնե-  
րը, ինչպէս ներկայումս հեռագիրներ են բաժանում: Յրիշի  
գործն էլ թեթեւանում է նրանով, որ նա ստիպուած չի լինի



սանդուխներով վերեւի յարկը բարձրանալ: Իւրաքանչիւր տան մէջ ծրագրուում է առանձին վերամբարձ ապսպարատ նամակների համար. նա վերեւ կբարձրանայ, նամակատէրի ընակարանի մօտ կկանգնի և նամակը արկղի մէջ կձգէ: միևնոյն ժամանակ ազդաբարդ զանգը քաշելով, որ հաղորդում է տանտէրին, թէ նամակ ունի: Վերջապէս, որպէս զի նամակներով լիքը կառքերը գողերի յավշտակութիւններից ազատ լինեն, Պիտիշելին դրա համար էլ առանձին յարմարութիւն է գտել. եթէ գողերը բարձր մետաղեայ սիւներն ելնեն, անխուսափելի կերպով պէտք է զկաշեն մետաղեայ օղակին: որի միջով անցնում է սաստիկ լարուած էլեքտրական հոսանք. միմիայն մի փոքրիկ շփում այդ օղակի հետ, որ գտնորը իրաւամբ անուանել է մահաբեր օղակ, բաւական է մահացու հարուած ստանալու համար:

Ահա այս է մօտաւորապէս փոստային դործը արժատական կերպով բարեփոխելու համառօտ ծրագիրը: Երբ այսպիսի կազմակերպութիւն հաստատուի, փոստային հաղորդակցութիւնն այնպէս արագ կկատարուի, որ նէպօլէոնի ժամի 10-ին ուղարկուած նամակները մի ժամ յետոյ Հռոմ կհասնեն և տէրերին կյանձնուեն: մինչդեռ այս երկու քաղաքների մէջ եղած հեռաւորութիւնը 250 վերստ է: Աւելացնենք և այն, որ այս տեսակ փոստային գծեր անցկացնելու համար մեծ ծախսեր չեն պահանջուի:

Կարծիքներ Ֆրանսիական մամուլի մասին.—Փրանսերէն պարբերական հրատարակութեան մի խմբագրութիւն զիմել է օտարազգի զբոյժներին, առաջարկելով նրանց իրանց կարծիքները յայտնել Փրանսիական ներկայ մամուլի մասին: Բանից դուրս է դալիս, որ շատերը դատապարտում են Փրանսիական մամուլը յատուկ նրա համար, որ Ֆրանսիայից դուրս կտտարուող եղելութիւններն ու երևոյթները շատ քիչ, այն ևս մեծ մասամբ սխալ են հաղորդում Փրանսիական մամուլի մէջ: Անգլիական լրագիրներն ընդունում են, որ Ֆրանսիայի ամենօրեայ մեծ լրագիրները անգլիականներից լաւ են գրական տեսակէտից, բայց ուրիշ կողմերով աւելի ստոր են. օրինակ Փրանսերէն լրագիրները շատ չեն հոգում թարմ նորութիւնների, լուրեր ստանալու արտառահմանից: Փրանսերէն լրագիրները հետաքրքրեցնում են ընթերցողներին նրա համար, որ ոճով և ճաշակով դեղեցիկ յօդուածներ են տալիս: Սակայն անհատականութեան կնիքը դրուած է լինում ըոլոր յօդուածների, նորութիւնների և նոյն խի լուրերը վրայ: Եւրոպայում չկայ աւելի պարզասիրտ, աւելի կրակոտ



կարեկից, իւր գործն անշաղի սիրող մամուլ, քան Ֆրանսիականն է։ Բայց դա բացառապէս փարիզեան ընաւորութիւն է կրում և թէպէտ ձեռով ըստ ամենայնի կատարեալ է, սակայն հաղորդած փաստերը հալած իւղի տեղ չպէտք է ընդունել միշտ։

Մի անգլիացի այսպէս է գրում. «Ներկայումս Ֆրանսիական լրագրութիւնը դեկլարող դեր է կատարում։ Լրագիրների մէջ գրում են նախարարներ, պարլամենտի անդամներ ու հասարակական նշանաւոր գործիչներ։ Համեմատելով Ֆրանսիական և անգլիական լրագրութիւնները, հեղինակը նկատում է, որ ճշտութիւնը երբեմն բացակայում է Ֆրանսիական մամուլի մէջ. ամէնից առաջ պահանջում է, որ «սրամիտ և բազմատեսակ նիւթ տրուի»։

Բնորոշելու համար Ֆրանսիացի ընթերցողին, առաջ ենք բերում «Ֆիգարո» լրագրի լամբազրի կարծիքը. «Փարիզեցիք աւելի հետաքրքրւում են քրոնիկոնով, թէկուզ պարունակէ լուրեր միշտ մասին, որի վրայ փոփոցում կառքը անցել է, քան թէ օտար տէրութիւնների մէջ եղած պատերազմով։ Ուստի և լրագիրների մեծ մասը գլխաւոր տեղը տալիս են քրոնիկոնին, ապա Ֆելետոնին, իսկ ամէնից քիչ տեղ արտասահմանեան քաղաքական լուրերին։

Ամերիկայի կրեստսններ. — Ամերիկայում դեռ ևս այն կարծիքն է իշխում, թէ կեանքի մէջ յաջողութիւն ունենալու համար ստորին պաշտօններից պէտք ոկսել և ապա աստիճանաբար բարձրանալ մինչև հատարակական սանդուխի կատարը։ Ամերիկացի հարուստների մեծ մասը, որոնք ներկայումս խոշոր ձեռնարկութիւնների գլուխ են անցած, հէնց այսպէս էլ ոկսել են իրենց գործունէութիւնը։ Նորա իրանք առաւելութիւն են տալիս այն երիտասարդներին, որոնք փոքրութիւնից անցել են կեանքի դպրոցը և որ և է արհեստով պարապել՝ թէկուզ կօշիկներ մաքրելով։ Պողպատ արդիւնաբերողների ընկերութեան նախագահ Շվաբը մի անգամ հետեւեալ կարծիքն է յայտնել. «Բարեկամներ, գիտէ՞ք թէ կեանքի մէջ յաջողութիւն ունենալու դաղանիքը որն է։ Պէտք է աշխատել ամէն օր գործը հարեանից մի քիչ լաւ կատարել։ Վերցրէք մի պատանի, որ գիտէ գործիքներ բանեցնել և ստիպեցէ՛ք նրան 16 տարեկան հասակից աշխատել, համեմատեցէ՛ք դրան համալսարանաւարտ երիտասարդի հետ, որ 20 տարեկան հասակումն է կեանքի մէջ մտնում։ Սա թէպէտ գիպլոմ ունի, բայց չի կարող այն աշակերտին հասնել, որ 4 տարի առաջ է



սկսել իւր գործը, իսկ այս հասակում չորս տարին այնպիսի ժամանակամիջոց է, որ կորցնելուց յետոյ դժուար է փոխարինել: Մի անգամ քառասուն հոգուց բաղկացած խոշոր հարուստների շրջանի մէջ ընկայ, նրանցից 38-ը միմիայն տարրական արհեստաւորաց դպրոցն էին աւարտել: 18 տարի առաջ ես 15 տարեկան մի պատանի էի ճանաչում, որ բանուորների համար խմելու ջուր էր բերում. նա այնքան բարեխղճութեամբ կատարում էր իւր պարտքը և միշտ մաքուր, թարմ ջուր բերում, որ մեծաւորի ուշադրութիւնը դարձրեց իւր վերայ և հիմա նախկին ջրկիրը մի ընկերութեան նախագահ է և 60,000 բանուորների կառավարիչ . . . .:

Այս կարծիքին է նաև նշանաւոր հարուստ Կարնեջի, որ սակայն աշխատում է կրթութեամբ ճարտարապետների թիւը շատացնել. այս նպատակով էլ 50 միլիոն դոլար է նուիրել համալսարաններին՝ թողահաւորներ պահելու համար: Ըստ երևութին նա ինքն իրան հակասում է. բայց իրօք նրա ցանկութիւնն է ուսանող արհեստաւորի գործնական խելքը միացնում են զիտնականի խելքի հետ: Դպրոցական պարապմունքներին պէտք է հետևէ գործնական աշխատանքը, որ և յաջողութեան պայմաններից մէկն է: Ուսանողները ազատ ժամանակ որևէ գործնական պարապմունք ունին՝ արհեստաւոր են դառնում, գրասենեակի կառավարիչ, ձիաքարշի տոմսակներ վաճառող ևլն: Ուսանողների առնուազն երրորդ մասը այս միջոցով է գլուխ պահում: Այսպէս ուրեմն յաջողութեան պայման են նաև դեմոկրատիքական բարքերը, և ոչ միայն համալսարանների առաւելութիւնը:

Նոր Մարուսաղայ.—Տօմսկից հեռագրում են, որ այնպիսի հիւանդանոցն է մտել 200 տարեկան մի ծերունի: Նա ունի մետրիքական վիպյահան և ուրիշ ապացոյցներ, որոնք վկայում են նրա ծերութեան տարիքը: Մի անցաթուղթ էլ ունի, որ տրուած է նրան 1763 թուին: 123 տարի է անցել, ինչ նա այրիացել է. նրա որդին վախճանուել է 1824 թուին 90 տարեկան հասակում: Ծերուկը պատմում է, որ անձամբ երես առ երես տեսել է Պետրոս Մեծին և Եկատերինա Բ-ին, Այժմ հիւանդը անկողնից չի կարողանում վեր կենալ. մտաւոր կարողութիւնները անվնաս են մնում:



Արժանավոր երկար միտում.—Անդլիական մի լրագիր հաղորդում է, որ շոտլանդացի մի մարդ, Ազեքոսանդր Վիլկին, շատ երկար միջուք ունի՝ երկարութիւնը 7 ոտնաչափ և 21 $\frac{1}{2}$  մատնաչափ, մինչդեռ միջուքի տիրոջ բարձրութիւնը 5 ոտնաչափ և 10 մատնաչափ է. այսպիսով միջուքը երկու ոտնաչափով երկար է մարմնից։ Մինչև 25 տարեկան հասակը միջուքը շատ բնական էր աճում, յետոյ միայն սկսուեց արտասովոր աճումը։ Որպէսզի միջուքը ման գալու և ուրիշ շարժումներ ժամանակ իրան չխանգարէ, Վիլկին մի քանի անգամ ծալում է և ժլկետի տակը պահում։

Նրաժեսուրեան ազդեցութիւնը կենդանիների վրայ.—Մի քանի ժամանակ առաջ ֆրանսիացի անասնաբոյժերից մէկը հետաքրքրական դիտողութիւն կատարեց ձիերի վրայ, որոնք հնարաւորութիւն ունէին ախոռից երաժշտութիւն լսելու։ Փորձի համար նպաստաւոր հանգամանքներ կային. նախ՝ ընտրուած էր բարձր և ընդարձակ ախոռ, լաւ բեզոնանս արձակող առաստաղով։ Պատուհաններն ու դռները պինդ փակուած էին, որպէս զի դրոշի աղմուկը ձիերի ուշադրութիւնը չցրէր։ Երկրորդ՝ ախոռում միայն տասնեհինգ ձի էին կապել, որովհետև եթէ դրանից շատ լինէին, ոտների տրոփիւնն և շղթաների խշխշոցը կխանգարէին, որ ունկնդրող ձիերը իրանց ուշադրութիւնը կենտրոնացնէին։ Երրորդ՝ փորձի համար ընտրել էին ամենայարմար ժամանակ, այն է ճաշից յետոյ, երբ ձիերը բոլորովին կուշտ էին և տրամադրութիւն ունէին հանգիստ ժամանակ անցկացնելու։ Վերջապէս, անհրաժեշտ էր, որ փորձը կատարեալ լռութեան մէջ կատարուէր, որովհետև հակառակ դէպքում ձիերն անհանգիստ շարժումներ են անում և այնպիսի աղմուկ են բարձրացնում, որի ժամանակ շատ դժուար կլինէր նոցա ստացած իսկական տպաւորութեան մասին դատել։

Փորձից երևաց, որ ձիերն աւելի մեծ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ լսում են, երբ ֆլէյտի և ջութակի վրայ են ածում, քան երբ զինւորական երաժշտութեան գործիքների վրայ պատերազմական մարշեր են նուագում։ Առանձնապէս ֆլէյտան աւելի դիւր եկաւ ունկնդիրներին։ Անասնաբոյժի դիտողութիւններից երևում է, որ ձիաներն ամենից աւելի հաւանում են նրան, ինչ որ մարդկանց վրայ էլ հաճելի տպաւորութիւն է թողնում. այսպէս, նրանք մեծ բաւականութեամբ լսում են



երաժշտական մի ամբողջացած հատուած, իսկ երբ ֆլէյտան հատ-հատ սուր և խիստ ձայներ էր հանում կամ կեղծ ելեկէջներ անում, այն ժամանակ անհանգստութեան նշաններ են ցոյց տալիս:

Ահա թէ ինչ պատահեց այս հետաքրքրական փորձի ժամանակ: Երբ առաջին անգամ ֆլէյտան ձայներ արձակեց, ձիերն իրանց դուռները դարձրին նուագածուի կողմը և սկսեցին մեծ հետաքրքրութեամբ և ուշադրութեամբ դնել նրան: Տեսնելով, թէ որտեղից է դալիս ձայնը, ձիերը դուռները շուռ տուին դէպի մօտերը և սկսեցին ահանջ դնել: Նուագածուի երևալուն անտարբեր վերաբերուեց ձիերի միայն  $\frac{1}{3}$  մասը: Մնացածները, երևում էր, որ բաւականութիւն էին զգում:

Միւս կենդանիներից երաժշտութեան սիրող են հանդիսանում փղերը: Նրանք ոչ միայն մեծ յափշտակութեամբ ամեն տեսակ երաժշտութեան ահանջ են դնում, այլ և յաճախ դուռները երաժշտութեան չափի համեմատ շարժում են, ինչպէս շատ անգամ մարդիկ ոտով չափ են տալիս որ և է երաժշտական խաղի ժամանակ: Ինչքան էլ տարօրինակ թուայ, բայց և այնպէս իրողութիւն է, որ արջերն էլ երաժշտութեան թունդ սիրահարներ են: Մի քանի տարի առաջ Փարիզի կենդանաբանական պարտիզում պատահաբար հետեւեալ երևոյթը տեղի ունեցաւ: Մեծ վանդակի մէջ բանտարկուած երեք արջեր անժամանակ իրանց մօտ ձգած մի կտոր մսի համար իրար հետ կռուի են բռնուում: Կռիւը քանի գնում սաստկանում էր, այնպէս որ ստիպուած եղան ջրհան մեքենայով ջուր ցանել նրանց վրայ՝ բորբոքուած կրքերը հանգստացնելու համար. բայց հէնց այս ժամանակ մի քանի քայլ հեռաւորութեան վրայ լսուեցին ջութակի հնչիւններ: Արջերն իսկոյն ձայները կտրեցին, հանգարտուեցան և մօտեցան վանդակապատին, որտեղից հնչում էին ջութակի ձայներ: Ջութակ ածողին խնդրեցին մօտ գնալ. նա էլ չորքոտանի կենդանիների համար մի ինչ որ մարշ ածեց, որից արջերը ուրախ տրամադրութեան մէջ բնկան, այնպէս որ ջրի օգնութիւնը այլ ևս չհարկաւորուեց:

